ԺԷ ԴԱՐԻ ՏԱՂԱՍԱՑ
ՄԱՐՏԻՐՈՍ ՄՈԿԱՑՈՒ ՄԻ ՉԱՓԱԾՈՆ

Մաշտոցյան Մատենադարանի N 2079 ձեռագրի գլխավոր հիշատակարանը (թ. 410-413) ուշագրավ մի բանաստեղծություն է: Ձեռագիրը (413 թերթ, 18x13) ժողովածու է. ըստ մյուս հիշատակարանների (63ա, 114բ, 145ա, 221բ, 235բ, 339ա, 397ա)՝ այն գրված է ԺԷ դարում՝ ՌՀԱ - 1622 թ. հետո, Լիմ անապատում, Հովհաննես Մոկացու ձեռքով, Հովհաննես քահանա Շատախեցու պատվերով: Չափածո հիշատակարանն անավարտ է, ըստ ենթախորագրի՝ այն պետք է ունենար ՃԾԶ (156) տուն, սակայն առկա է միայն յոթանասունհինգը: Բանաստեղծությունը Հին և Նոր Կտակարանների պատմության վերարտադրություն է. սկսվում է արարչագործությամբ և կարգով գալիս մինչև Քրիստոս, այնուհետև նրա մեջ հիշվում են ձեռագրում առկա բոլոր գործերը՝ ըստ հեղինակների (Ներսես Շնորհալի, Հովհաննես Երզնկացի, Ստեփաննոս Սյունեցի, Ներսես Մոկացի, Մեսրոպ Վայոցձորեցի, Գրիգոր Նյուսացի, Առաքել Սյունեցի, Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Թլկուրանցի և միջնադարյան մի շարք տաղերգուներ): Հեղինակը իր հիշատակարան-բանաստեղծությունն անվանում է Յիսուս Որդի: Ընթացքում նշվում է նաև Հովհաննես անունը, որը շփոթ է առաջացնում, առավել ևս, որ նրա մասին խոսվում է առաջին դեմքով: Թվում է, թե խոսքը գրիչ Հովհաննես Մոկացու մասին է, որը տրամաբանորեն կարող է ընկալվել նաև որպես բանաստեղծության հեղինակ, սակայն այդպես չէ. այստեղ խոսքը պատվիրատու-ստացող Հովհաննես քահանայի մասին է. ասվում է, որ նա փափագել է այս աստվածազարդ մատյանի՝ ժողովածուի մասին և խնդրել է Մարտիրոս Մոկացուն, որ նա հավաքի այն բոլոր գործերը, որոնք ինքը ցանկացել է ունենալ ձեռագրում: Միջնադարում հաճախ էր պատահում, որ գրիչը սոսկ հեղինակի թելադրածի գրող-գծող էր: Սա էլ հենց այդ դեպքն է. Հովհաննես Մոկացին լոկ գրել է այն, ինչ նրան թելադրել է Մարտիրոս Մոկացին, որի խոսքի մեջ Հովհաննես քահանա Շատախեցին հիշատակվում է այս ժողովածուն ունենալու իր փափագով: Եվ արդեն շարադրանքի ավարտին Մարտիրոս Մոկացին պատմում է, որ ինքը սիրով է հանձն առել կատարել իրեն խնդրված՝ նյութերի ժողովման գործը. մի տեղ է հավաքել ստացողի պատվիրած աշխատությունները, տաղերը, ոտանավոր չի խնայել ձեռագիրը զարդարելու համար և ձեռագրի վերջում էլ իր ձեռքով գրել է մեր խնդրո առարկա հիշատակարան-բանաստեղծությունը: Եվ բանաստեղծության վաթսունհինգերորդ տան մեջ հեղինակը թողել է հետևյալ տողը. «Մարտիրոս հոդս Մոկացի», սա նշանակում է, որ այս բանաստեղծության հեղինակը Մարտիրոս Մոկացին է[1]: Բանաստեղծությունը բաղկացած է եռավանկ անապեստյան ոտքերից[2] և գրված կից հանգավորմամբ[3]: Հասմիկ Սահակյանն իր «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.)» գրքի երկրորդ հատորում չզետեղված ոտանավոր-

---

[1] *Քանի որ հայ գրականության մեջ Մարտիրոս Մոկացի անունով բանաստեղծ հայտնի չէ, սկզբում մտածեցինք, որ գուցե շփոթ է, գուցե խոսքը Ներսես Մոկացու մասին է (այդ մասին մեզ ենթադրել էր տալիս ոչ միայն Մոկացի անձնանունը, այլև՝ Ժողովածուում Ներսես Մոկացու աշխատությունների առկայությունը): Բայց Ներսես Մոկացուն վերաբերող ուսումնասիրություններում նրա գրչին պատկանող նման բանաստեղծության մասին խոսք չկա. տե՛ս* **Ներսես Մոկացի**, *Բանաստեղծություններ, Ե., 1975,* **նույնի՝** *Բանաստեղծություններ, Ե., 1985,* **Դոլուխանյան Ա.**, *Ներսես Մոկացի, Էջմիածին, 2009:*

[2] *Տե՛ս* **Ջրբաշյան Էդ.,** *Գրականության տեսություն, Ե., 1967, էջ 259:*

[3] *Նույն տեղում, էջ 286:*

ների ցանկում[4] *այս բանաստեղծությունը նշելով՝ հեղինակ է համարել ձեռագրի գրիչ Հովհաննես Մոկացուն*[5]*: Հարկ է շեշտել, որ գրչի հիշատակարաններից շատերը ևս չափածո են, սա թերևս պայմանավորված է հենց Մարտիրոս Մոկացու ազդեցությամբ: Ակնհայտ է, որ Մարտիրոս և Հովհաննես Մոկացիները գրչակիցներ են եղել: Մարտիրոսի գրչին է պատկանում նաև Մատենադարանի N 5302 ձեռագիրը (Մոկս, 1657 թ.), որն ունի հետևյալ չափածո հիշատակարանը՝*

Ես՝ **Մարտիրոս** *մեղաց գերի,*
Որ ցնորեալ եմ յաշխարհի,
Զձեզ աղաչեմ եղբար[ք] բարի,
Որ ինձ ասէք դուք ողորմի,
Զի Տէր Աստուածն ողորմեսցի. ամէն (57աբ):

Եվ քանի որ N 2079 ձեռագրի հիշատակարան-բանաստեղծության մեջ Մարտիրոսն իրեն Մոկացի է կոչում, իսկ N 5302-ի գրիչ Մարտիրոսն էլ իր ձեռագիրն ընդօրինակել է Մոկսում (ի դեպ՝ ժամանակային առումով ևս իրար մոտ. առաջինը՝ 1622-ից հետո, երկրորդը՝ 1657 թ.), և հիշատակարաններն էլ չափածո են, հետևաբար, կարելի է մտածել՝ երկու դեպքում էլ միևնույն Մարտիրոսն է: N 5302 ձեռագրի հիշատակարաններից մեկում (147ա) Մարտիրոս Մոկացին տալիս է կնոջ (Նուպար) և որդու (Կարապետ) անունները: Սա էլ մեզ հիմք է տալիս կարծելու, որ նրա գրչին են պատկանում ևս երեք ձեռագիր՝ Մատենադարանի N 4693 (Լիմ, 1648 թ.), Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի N 93 (Մոկսի Դաշտ գյուղ, 1652 թ.), Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հ. Ա, N 821 (Դաշտ, 1654 թ.): Այս ձեռագրերի գրիչը հայտնի է որպես Մարտիրոս քահանա:

Ըստ միջնադարում ընդունված ավանդության՝ որ գրիչը հաճախ ինքն էր ծաղկում մատյանը, չի բացառվում, որ Մարտիրոս Մոկացին ևս ունենա ծաղկած ձեռագրեր: Մատենադարանի N 8205 ձեռագրի[6] *գրիչ և ծաղկող Մարտիրոս քահանան, ամենայն հավանականությամբ, նույն Մարտիրոս Մոկացին է: Այս եզրակացությանը հանգել մեզ թույլ է տալիս ձեռագրում չափածո հիշատակարանների առկայությունը.*

Այս խորանիս անուն է թուբ,
Գծող սորա **Մարտիրոս** *տրուպ,*
Զձեզ աղաչեմ եղբայրքդ սուրբ,
Յիշել զմեղօք անկեալս ի գուբ:

Ստացաւդ տառիս զտէրդդ հայր սուրբ,
Զրաբուն բաբից զմաքրեալդդ զուտ,
Հայաստանեաց զպէտդդ խումբ,
Եւ սուրբ գրոց տաճար և տուբ[7] *(265ա):*

Այս նույն ձեռագրում կան Մարտիրոս քահանայի գրչին պատկանող այլ չափածո հիշատակարաններ ևս, թեև նրա անունն այնտեղ չի նշվում (238ա, 77բ):

---

[4] **Սահակյան Հ.**, *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.), հ. 2, Ե., 1987, էջ 813:*

[5] *Քանի որ այս բանաստեղծությունը Հ. Սահակյանի ուսումնասիրության ոլորտում չի եղել, նա պարզապես հպանցիկ անդրադարձ է ունեցել և բանաստեղծությունը վերագրել է Հովհաննես Մոկացուն:*

[6] **Գևորգյան Ա.**, *Հայ մանրանկարիչներ, Մատենագիտություն, IX-XIX դդ., Կահիրե, 1998, էջ 388:*

[7] *Նման բառ գոյություն չունի, հեղինակը հորինել է հանգավորման համար:*

N 2079 ձեռագիրը արժեքավոր է նաև մանրանկարչական արվեստի տեսանկյունից, ինչի վկայությունն են ոչ միայն ձեռագրի բովանդակությանը համապատասխան թեմատիկ մանրանկարները (ինչպիսիք են՝ Քրիստոս և Ներսես Շնորհալի՝ 10բ, Ներսես Շնորհալի՝ 47բ, 155բ, Դավիթ Անհաղթ և Ներսես Շնորհալի՝ 62բ, Սուրբ Երրորդություն և Ներսես Շնորհալի՝ եռախորանի կենտրոնական կամարի ներքո, վերին մասում՝ Հայր, Որդի և աղավնակերպ Սուրբ Հոգի՝ 70բ, Եռախորան, որի ներքո՝ պատանված Ներսես Շնորհալին, երկու կողմերում՝ Ներսես Լամբրոնացի և Լևոն արքա՝ 144բ, Եռախորան, որի ներքո՝ հաղորդության բաժակ՝ 175բ, Վերափոխումն Աստվածամոր (ննջումն Աստվածածնի, նրա մանկանման հոգին Քրիստոսի գրկին)՝ 195բ), այլ նաև 97ա էջին պատկերված արեգակնային համակարգը, որի շուրջը՝ շրջանակներում կենդանակերպի նշաններն են, 114բ էջի բավական բարդ զարդախաչ-վարդյակը, կիսախորան-անվանաթերթերը, ճակատազարդերը, նրբագեղ լուսանցազարդերը և զարդագրերը, հարուստ ու նրբաճաշակ գունապնակը (կարմիր, կապույտ, կանաչ, դեղին, մանուշակագույն, շագանակագույն, սև): Ցավոք, իր յուրատիպ արվեստով առանձնացող այս վարպետը ձեռագրում հիշատակարան չի թողել, ըստ որի, նրա անունը հստակ չենք կարող նշել, և միայն ենթադրվում է, որ ծաղկողը նույն ինքը ձեռագրի գրիչ Հովհաննես Մոկացին է[8]:

Գեղարվեստական արժանիքները նկատի ունենալով՝ ստորև բերում ենք բանաստեղծությունը՝ հիմնականում պահպանելով բնագրի ուղղագրությունը (ձեռ. N 2079, 410բ-413ա):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Տ. Գ.

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Է ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՊԻՏԱՆԻ
(տունք ՃԾԶ, այլ Յիսուս Որդոյն պատշաճաւոր է)

410բ Աստուած, որ լոյսն է պարզագոյն,
Բնութեամբ անհաս և բարձրագոյն,
Երրեակ անձինք և մի բնութիւն
Պաշտեալ յէիցս աստուածութիւնն:
Մի ի յերից մեզ քարոզի,
Երրեակն ի մի խոստովանի,
Հայր և Որդի և Սուրբ Հոգի,
Ստեղծիչ բնաւից հանուրց սեռի:
Նոյն ինքն արար զմարդն իւր պատկեր,
Իշխան և Տէր, փոքր և կր[տ]սեր,
Եդ ի դրախտին եդենական,
Ի վայելումն անմահական:
Եւ թշնամի բնութեան մարդոյս,
Ամբարտաւանն իշխանն օդոյս,
Խեթիւ խաբեաց զմարդընն պլըտղով,
Աստուած լինելընն պատճառով:
Աւձիւն ընդ կինընն խօսեցաւ,
Մարդընն կնոջովընն պատրեցաւ,
Առեալ եկեր և մերկացաւ,

[8] **Գևորգյան Ա.**, *Անանուն հայ մանրանկարիչներ, Մատենագիտություն, IX-XVII դդ., Կահիրե, 2005, էջ 395:*

Արտաքսելով կործանեցաւ:
Բայց, որ բնութեամբ բարի և Տէր,
Նախախնամող և մարդասէր,
Ոչ բարկացաւ իսպառ նմին,
Այլ նորոգեաց զնա վերըստին:
Թէպէտ խաւար նըսեմային,
Առագաստեաց զմիտ անմարմին,
Ընդ պաշտելոյն ստոյգ Արարչին,
Պաշտել զաշխարհս փոխան նմին:
Այլ յետ դարուց ժամանակին,
Յայնեալ մեծի հօրըն նախնի,
Աբրահամու և որ զկնի,
Ծնընդոց նորին անթըւելի:
Որ և Մովսէսըն ջրածին,
Կամօք յայտնեալ բարերարին,
Եհան զազգն Եբրայեցին,
Հրաշիւք գործով յանապատին:
Եւ յետ աճմանըն բազմութեան,
Ետ Տէր օրէնս արդարութեան,
Ծանոյց և զինքն Աստուած համայն,
ՅԻսրայէլի ազգին միայն:
Յայտնեաց ըզգիծ հրաժարական,
Եւ ըզբազումըս յանձնառական,
Ետ և վարիչըս զանազան,
Մարգարէից հոյլք յոգնական:
Զի ուսուցին և ծանուցին,
Ըզշնորհ գործոյ պատուիրանին,
|411ա| Եւ ի հոգոյն ազդեալ գրեցին,
Զգալուստ բանին Տեառն և Փրկչին:
Յորոց և Յոր նախ առաջին,
Դաւիթ երկրորդ ըզկնի նորին,
Եւ Սողոմոն որդի նորին,
Եսայիաս մաքուր հոգին:
Հրաշատեսիլն Եզիկիէլ,
Եւ Դանիէլ այր ցանկալին,
Երեմիաս ողբողըն հին,
Երկոտասանքն ի միասին:
Ամենեքեան գուշակեցին
Ըզփրկութիւնըս մարդկային,
Զոր և ծնընդեամբ մարմնով բանին,
Մըտեալ ի դրախտն, ուստի ելին:
Արդ, այս ահա կատարեցաւ,
Բանն մարմին եղեալ ծնաւ,
Աստուած և մարդ մեզ երևեալ,
Յերկուց բնութեանց ի մի խառ[ն]եալ:
Կոխան հնոյ նախնի մարդոյն,
Հինն Ադամայ, Քրիստոս ընդ նոյն,

Ընդ Եւայի կոյս տիրուհին,
Աստուածածինն և սրբուհին:
Յորոյ արգանդրն ձուլեցաւ,
Բնութիւն մարդոյս պարագրեցաւ,
Եւ վերստին նորոգեցաւ,
Զի հին մեղաց մարդրն մեռաւ:
Նոր արեգակրն մեզ ծագեալ,
Քրիստոս, որ լոյս ճառագայթեալ,
Տնօրինական մարդեղութեամբ,
Գործեալ զիրաշս աստուածութեամբ:
Յետ մաքրութեանն ի Յորդանան,
Վկայաբանութեամբրն հայրական,
Փորձին ի լեառրն յաղթութեան,
Կոչեաց զոմանս ողորմութեամբ:
Զաշակերտաց գունդն լրման,
Զերկոտասանսրն սրբազան,
Տրգէտք ձրկնորսք և մաքսաւորք,
Մարդկան ի կեանս ուռկանաւորք:
Շարժմամբ զնոսա մտօք կրթեաց,
Եւ յաշխարհէ ի վեր քարշեաց,
Սուտ զերկաւորրս համարեալ,
Եւ երկնայնոցրն հետևե[ա]լ:
Եւ յետ խաչին կրից և մահուան,
Կենդ[ան]արար սուրբ յարութեան,
Եբաց ըզմիտրս թանձրութեան,
Զգիրս իմանալ նախագրական:
Զմարգարէիցրն համաձայն,
Զոր ի նմանէ կատարեցան,
Զի որք նոքօք գուշակեցան,
Այն Քրիստոսիւ աւարտեցան:
Եւ վերացմամբն իւր ի յերկին,
Ետ զփառակիցրն Սուրբ Հոգին,
Ի վերնատանն, ուր բազմէին,
Հրեղէն լեզուօք հրազինէին:
Որով արբեալք Հոգոյն շնորհիւ,
Ոչ ըստ մարմնոյ գոլ երկիւղիւ,
Այլ համարձակ միամտութեամբ,
Քարոզէին ուրախութեամբ:
|411բ| Ընդ տիեզերս ընթանալով,
ԶԱստուածրն մարդ քարոզելով,
Ըզնոյն խաչեալ և ստոյգ սպանեալ,
Յերրորդ յաւուր գոլ յարուցեալ:
Զամենայնսն, զոր ուղղէին,
Զրով մաքրութեամբ մրկրտէին,
Հոգով Հօր որդէգրէին,
Եւ քրիստոնեայ անվանէին:
Զխորհուրդն ոչ սոսկ բանիւ տայի[ն],
Այլ և գրով արձանէին,

Ըզաւետիս մեր փրկութեան,
Ազգի մարդկան ազատութեան:
ԶԱւետարանն կենսական,
Զչորեքգլուխն, որ ի սմայ կան,
ԶՄաթէոսին և զՄարկոսին,
Եւ զՅոհաննուն ընդ Ղուկասին:
Թիւք քառեկի խորհրդական,
Հընչումըն սուրբ չորեքծագեան,
Պատմողք Բանին մարմնոյ ծնընդեան,
Եւ անսկիզբն անճառ ծագման:
Բացողք երկնից ճանապարհին,
Ածողք ի դրախտն յադին,
Զի գետք են չորք քառավտակք,
Անդ մուծանեն ուստի ելաք:
Այլ ըստ բանիցըն խրատական,
Գործովք եղեն ստոյգ կերպարան,
Զի զգործսըն Բանըն հաստատէր,
Եւ Բանին գործըն վըկայէր:
Զոր և Ղուկաս պատմաբանէ,
Զիւրաքանչիւրսն, որ են ճառէ,
Զառաքելոցըն քաջութիւն,
Առ հաւատոյն ճշմարտութիւն:
Քանզի երկեամբ չարչարէին,
Վասն Յիսուսի արեամբ հոտին,
Զի մի գառինքըն պատառին,
Առ ի ժանեաց չար վիշապին:
Որ և գրով աւանդէին,
Զգանձեալ շնորհն և կընքէին,
Զի տրամադրեալ ունակական,
Յանձն և ի սիրտ անշարժական:
Որպէս Պետրոսն, որ վէմ անկեան,
Եւ Յակոբոս, որ տիրական,
Նաև Յուդասն և Շըմաւոն,
Թուղթ գրեցին ընդհանրական:
Այլև Պօղոսն անօթ հոգոյն,
Կոչմամբ ածեալ հրաշիւք յետոյ,
Հազարպետն եկեղեցոյ,
Դիտող գանձուց Հնոյն և Նորոյ:
Նամակ գրեալ յորդորական,
Բազմազունակ չորեքտասան,
Որք են մեզ տունկք պը[տ]ղով լցեալ,
Դրախտ հոգևոր և ճոխացեալ:
Այլև սուրբ հայրն մեր ընտրեալ,
Երանաշնորհն հոգով լցեալ,
|412ա| Առաքելոցն նմանեալ,
Սուրբըն Ներսէս աստուածարեալ:
Որ Կլայեցի գոլ յորջորջեալ,

Տեղի շնորհաց Տեառն գտեալ,
Ոտանաւորս յոլովս շինեալ,
Ութ հազար տուն կատարեալ:
Միշտ կերակրեն ըզմեզ հոգով,
Լուսաւորեն անմահ լուսով,
Ընդ սմին և այլ սրբոց յոլով,
Որ գրեցաւ ընդ սա կարգով:
Ադամագիրք Առաքելին,
Եւ Յովասափն ընդ նոյն շարին,
Ողբըն ոգեալ Էջմիածնին,
Ստեփաննոսի Սիւնեաց Մեծին:
Եւ այլ բազումք, որ ոչ թւին,
Որ գրեցաւ յայս մատենին,
Լինել ինձ դեղ ախտիս վիրին,
Որ խոցեալ եմ նետիւ չարին:
Արդ, ես կարօտս քաղցեալ ոգի,
Ըստացայ զանձս այս ըղձալի,
Սփոփանք հոգոյ իմ և սրտի,
Եւ հեշտութիւն ուրախալի:
Զի տեսանեմ ըզսայ սանդուխք,
Հանեալ յերկրէ զմեզ ի վերուստ,
Այլև զաւակ արձանութեան,
Պատճառ յուսոյ և փրկութեան:
Է տապանակ ոսկի սըրբեալ,
Շնորհաց բանին Հօր յօրինեալ,
Այլև սեղան մաքուր կազմեալ,
Յոր զառն անմեղ ի սմա բազմեալ:
Եկեղեցոյ հաստատութեան,
Քրիստոնէից թագ սրբութեան,
Քահանայից ներգործակից
Սարկաւագաց միշտ խօսակից:
Առաքելոց իմաստ բանի,
Մարգարէիցըն ցանկալի,
Մարտիրոսաց հանդէս կոչման,
Թագաւորաց[9] զէն յաղթութեան:
Կրաւնաւորաց ժուժկալութիւն,
Եւ կուսանացըն մաքրութիւն,
Մեղուցելոց դարձուցանօղ,
Եւ արդարոց արգահատօղ:
Ընչջեցելոց հանգիստ լիցի,
Այնմ որ սովաւ իսկ կընքեսցի,
Եւ ի յաւուրն աներեկի,
Միշտ բարեխօս անլռելի:
Գրեցաւ ի թուին մեծ Հայկազնի,
Ռ (1000) ամին (1-2 բառի տեղ չգրուած – Մ. Տ.)
Ընդ նըմին երկուք յարաբարդի,

[9] *Այս տնից առաջ սխալմամբ գրել է □Մարտիրոսաց հանդէս կոչման, թագաւորաց□ բառերը:*

Եղև զբրաւ այս մատենի:
Յիսուս Որդի այս կըտակի,
Աստուած[ա]խօս սուրբ Սովփերի,
|412բ| Որ ամբարեալ յինքեան ունի,
Զամենեսեան ի մի տեղի:
Որպէս դրախտ պըտղով ի լի,
Ամէնառատ և բարելի,
Եւ կամ այգի վայելչալի,
Անուշահոտ և սքանչելի:
Է և սեղան անծախելի,
Կազմեալ հոգով ուրախալի,
Բաժակ սիրոյ միշտ բերկրալի,
Որ ըմպելոյ ոչ նուազի:
Այս լուսազարդ սուրբ մատենի,
Աստուածազարդ կտա[կա]բանի,
Յիսուս Որդի սա անուանի,
Առիթ կենաց ամենայնի:
Ծոյլ և պըղերգ և փանաքի,
Սուտ աբեղայ մեղաց գերի,
Անուամբս կոչի Յոհան[ն]էս,
Թափուրս բարեաց յամենայնի:
Որ ցանկացայ յօժար սրտիւ,
Որպէս զեղջիւրն ծարաւի,
Փափաքելով ի յաղբերի,
Խնդրող ջրոյս այս կենդանի:
Զոր վաղ հետէ եդի ի մտի,
Տենչայի սիրով այս կտակի,
Մինչև հասի ըղձմամբ սրտի,
Եւ կատարումն խորհրդի:
Եւ գծագրեցի ի մատենի,
ԶԱստուածաշունչս Յիսուս Որդի,
Զոր հաւաքեալ յինքեան ունի,
ԸզՀինն և զՆորընն անթերի:
Ի յԱրարիչըն սկըսա<սա>նի,
Մինչ ի գալուստն իւր կրկնակի,
Ըզնախաստեղծսն ընդ նահապետի,
Եւ զթագաւորս ընդ մարգարէի:
Զառաքեալսն ընդ վարդապետի,
Եւ հայրապետս ընդ մարտիրոսի,
Զճգնաւորսն ընդ կուսանի,
Զամենեսեան պատմէ յայտնի:
Զտնօրէնութիւնըն Քրիստոսի,
Կարգաւ պատմէ յոյժ անթերի,
Ի ստեղծմանէն ըսկսանի,
Ոտին չափով գայ ի կարգի:
Եւ աւարտէ ի յապառնի,
Զոր ընդգրգեալ յինքեան ունի,

Զոր արարեալ տէր Ներսեսի,
Անուամբ կոչեալ Կլայեցի:
Զոր ես մեղօքս չարեօքս ի լի,
Մարտիրոս հողս **Մոկացի**,
Յաւժարութեամբ ի յանձն առի,
Սիրով սրտի կատարեցի:
Տկար հոգով և ձանձրալի,
Մեղօք լցեալ յոյժ անթերի,
Լծակցութեամբ Հոգոյն շնորհի,
Զհուրն ի սրտէս իմ անցուցի:
Եւ յոյժ ջանիւ փութով ի լի,
Բազում հոգօք տառապելի,
|413ա| Մինչ զամենայն ժողովեցի,
Ի մի տեղի ամբարեցի:
Երանգ-երանգ բանիւ լրցի,
Եւ զանազան զարդարեցի,
Ոտանաւոր ոչ խնայեցի,
Ուստի կողմանց ուր և գրտի:
Այլ բաւական լիացուցի,
Լալեաց բաներ վասն իմ սրտի,
Որպէս լուսին, որ լրւացի,
Եւ արեգակն մէջաւրէի:
Ծառն, որ ծաղկի պըտղով ի լի,
Գարնանային եղանակի,
Այսպէս և սա է նազելի,
Աստուածաշունչս Յիսուս Որդի:
Ի տեսանելն ըզնա յերկրի,
Ստեղծողն երկնից փառաւորի,
Եւ յիշատակ սայ եղիցի,
Մինչ յաւիտեանս յաւիտենի:
Ինձ տառապեալ Յոհան[ն]իսի,
Մեղօք ի լի հոգով գերի,
Ի վայելումըն սիրալի,
Մանկանց սրբոյ նոր Սիովնի:
Միթէ և Տէրն ամենայնի,
Առնէ ըզսայ ընդունելի,
Ի գալըստեանն իւր կրկնակի,
Յորժամ փառօք գայ հայրենի:
Լսել տացէ զլուրն երանի,
Թէ եկ օրհնեալ ծառայ բարի,
Ինձ անպիտան ///[10]:

---

[10] *Շշարունակված, թողած անավարտ:*